

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

# ՏԱՐԵԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

Հաշվետու տարի

2025

Երևան  
2026



Հավելված

Հաշվեքննիչ պալատի

2026 թվականի մայիսի 26-ի թիվ 27-Լ որոշման

## 2025 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

*Սույն տարեկան հաղորդումը ներկայացվում է՝ ի կատարումն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 198-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, ինչպես նաև «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի և 30-րդ հոդվածի պահանջների:*

*Սույն տարեկան հաղորդումը պատրաստվել է Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI) հիմնարար սկզբունքները սահմանող Լիմայի հռչակագրի սկզբունքների հիման վրա:*

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Այս փաստաթղթի էլեկտրոնային տարբերակը ներկայացված է Հաշվեքննիչ պալատի կայքում՝ [www.armsai.am](http://www.armsai.am):

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	4
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	5
ԲԱԺԻՆ 1. Հաշվեքննիչ պալատի մասին	6
ԲԱԺԻՆ 2. Հաշվեքննիչ պալատի գործունեությունը	18
ԲԱԺԻՆ 3. Մարտահրավերներ եվ ինստիտուցիոնալ փորձի կուտակում	36
ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ	37

Հաշվեքննիչ պալատի աշխատանքների մասին հավելյալ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել՝ Հաշվեքննիչ պալատ

(011) 888 107  
19 Բաղրամյան  
ք. Երևան  
Հայաստանի Հանրապետություն

✉ [secretariat@armsai.am](mailto:secretariat@armsai.am)

🌐 [www.armsai.am](http://www.armsai.am)

🌐 [LinkedIn](#)

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

<b>ԱԱՀ</b>	Ավելացված արժեքի հարկ
<b>ԱԻ</b>	Արտակարգ իրավիճակ
<b>ԱՆ</b>	Առողջապահության նախարարություն
<b>ԱՌԿ</b>	Աղետների ռիսկի կառավարում
<b>ԲՀՄ</b>	Բարձրագույն հաշվեքննության մարմին
<b>ԵԱՏՄ</b>	Եվրասիական տնտեսական միություն
<b>ԵՄ</b>	Եվրոպական միություն
<b>ԽՀՄ</b>	Խնամակալության և հոգաբարձության մարմին
<b>ԿԳՄՄՆ</b>	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
<b>ԿԿՏՀ</b>	Կրթության կառավարման տեղեկատվական համակարգ
<b>ԿՖԿՏՀ</b>	Կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգ
<b>ՀՊ</b>	Հաշվեքննիչ պալատ
<b>ՀՈԱԿ</b>	Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
<b>ՄԱԿ</b>	Միավորված ազգերի կազմակերպություն
<b>ՆՈՒՀ</b>	Նախադպրոցական ուսումնական հաստատություն
<b>ՇՀԿ</b>	Շանհայի համագործակցության կազմակերպություն
<b>ՊԵԿ</b>	Պետական եկամուտների կոմիտե
<b>ՊՖԿՀ</b>	Պետական ֆինանսների կառավարման համակարգ
<b>ՏՀԶԿ</b>	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
<b>ՖՆ</b>	Ֆինանսների նախարարություն
<b>ASOSAI</b>	Բարձրագույն հաշվեքննիչ մարմինների ասիական կազմակերպություն
<b>CEPA</b>	Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր
<b>EITI</b>	Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն
<b>EUROSAI</b>	Բարձրագույն հաշվեքննիչ մարմինների եվրոպական կազմակերպություն
<b>INTOSAI</b>	Բարձրագույն հաշվեքննիչ մարմինների միջազգային կազմակերպություն
<b>ISSAI</b>	Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային ստանդարտներ
<b>USAID</b>	ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն
<b>WGPPA</b>	Պետական գնումների աուդիտի աշխատանքային խումբ

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննիչ պալատի գործունեությունն իրականացվում է INTOSAI-ի սկզբունքներին և մասնագիտական ստանդարտներին համապատասխան, և հաշվետվողականություն ապահովելու նպատակով՝ Հաշվեքննիչ պալատը հանրությանը և Ազգային ժողովին է ներկայացնում իր 2025 թվականի գործունեության տարեկան հաղորդումը: Այն բաղկացած է հետևյալ երեք բաժիններից.

**ԲԱԺԻՆ 1. Հաշվեքննիչ պալատի մասին:** Նպատակ է հետապնդում Հաշվեքննիչ պալատի՝ հանրային կառավարման բնագավառում ինստիտուցիոնալ տեղորոշման, ինչպես նաև նրա գործունեության սկզբունքների և ռազմավարական պլանների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն ներկայացնել ընթերցողին:

**ԲԱԺԻՆ 2. Հաշվեքննիչ պալատի գործունեությունը:** Ներկայացվում է Հաշվեքննիչ պալատի հիմնական գործունեությունը՝ ներառյալ կառավարման մոդելը, կոմիտեների, անդամների գործառույթները, ինչպես նաև հաշվեքննության ամբողջական շղթան՝ պլանավորումից մինչև հաշվետվություն և հետհսկողություն: Բաժնում ներկայացվում են հաշվեքննության 2025 թվականի գործունեության ծրագիրը, պետական բյուջեի կատարման հաշվեքննության արդյունքները, թեմատիկ հաշվեքննությունները, դրանց հաշվետվություններում արձանագրված անհամապատասխանությունները, խեղաթյուրումները և ներկայացված առաջարկությունների վիճակագրությունը:

**ԲԱԺԻՆ 3. Մարտահրավերներ և ինստիտուցիոնալ փորձի կուտակում:** Ներկայացվում են Հաշվեքննիչ պալատի գործունեության ընթացքում ի հայտ եկած մարտահրավերները և ինստիտուցիոնալ զարգացման տեսանկյունից նշանակալի ռիսկերը: Այս հատվածում, ինքնավերլուծության արդյունքների հիման վրա ներկայացվում են նաև ռիսկերը (սահմանափակումները), որոնց պայմաններում գործել է Հաշվեքննիչ պալատը, ինչպես նաև կառույցի հետագա բարեփոխումների ռազմավարական ուղղությունները:

Հաղորդումն ավարտվում է ուղերձով և վերջում ներկայացվում է հավելված, որտեղ ներառված են 2025 թվականին հրապարակված հաշվեքննությունների և հետհսկողության հաշվետվությունները:

# ԲԱԺԻՆ 1. ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՄԱՍԻՆ

## 1. Ռազմավարական ուղենիշները

Հաշվեքննիչ պալատը (այսուհետ՝ Պալատ) Հայաստանի Հանրապետությունում արտաքին պետական հաշվեքննության (հանրային հատվածում արտաքին աուդիտի) ոլորտում քաղաքականությունը մշակող, հաստատող և իրականացնող անկախ պետական մարմինն է:

**Պալատի առաքելությունն է՝**  
Հաշվեքննությունների միջոցով նպաստել հանրային կառավարման բարելավմանը:

**Պալատի տեսլականն է՝**  
Լինել օրինակելի և վստահելի բարձրագույն հաշվեքննիչ մարմին:

Պալատը, մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 1-ը, հաստատում է իր հաջորդ տարվա գործունեության ծրագիրը և աշխատանքները կազմակերպում է հաստատված ծրագրերի համաձայն:

**Պալատի մանդատը.**  
Հանրային սեփականության կառավարման օրինականությունը և արդյունավետությունը գնահատելու նպատակով, Հաշվեքննիչ պալատն իրականացնում է՝

- ֆինանսական,
- համապատասխանության, և
- կատարողականի հաշվեքննություններ:

Հաշվեքննիչ պալատը յուրաքանչյուր տարի՝ մինչև հունիսի 1-ը, Ազգային ժողով է ներկայացնում նախորդ տարվա իր գործունեության վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն պարունակող տարեկան հաղորդումը:

## 2. Կառավարման սկզբունքները

Պալատի գործունեությունը հիմնված է հանրային կառավարման արդյունավետության և լավ կառավարման հիմնարար սկզբունքների՝ անկախության, հաշվետվողականության և թափանցիկության վրա, ինչը հնարավորություն է տալիս ապահովել հանրային միջոցների օգտագործման արդյունավետ գնահատում, ամրապնդել հասարակության վստահությունը պետական ինստիտուտների նկատմամբ և նպաստել հանրային կառավարման բարելավմանը:

Պալատը գործում է որպես անկախ մարմին՝ առանց որևէ միջամտության, ինքնուրույն է որոշում իր հաշվեքննությունների առաջնահերթությունները, թեմաները, շրջանակները և առանց միջամտության է կազմակերպում Պալատի կառավարումը: Նրա գործունեության թափանցիկությունը և հաշվետվողականությունը հնարավորություն է տալիս շահագրգիռ կողմերին տեղեկանալ հանրային սեփականության կառավարման մասին, վերջիններիս գնահատման արդյունքների հրապարակման միջոցով՝ նպաստելով կառավարման ռիսկերի նվազեցմանը:



### Հաշվետվողականությունը

Պալատն իր գործունեության արդյունքները, ներկայացնում է հանրությանը, Ազգային ժողովին և Կառավարությանը:



### Թափանցիկությունը

Պալատն իր գործունեության արդյունքները հրապարակում է իր պաշտոնական [www.armsai.am](http://www.armsai.am) և ՀՀ հրապարակային ծանուցումների [www.azdarar.am](http://www.azdarar.am) ինտերնետային կայքերում:



### Անկախությունը

Պալատի Նախագահն ու անդամներն ընտրվում են Ազգային ժողովի կողմից վեց տարի ժամկետով: Այդ ընթացքում նրանք չեն կարող զբաղվել քաղաքական գործունեությամբ, ինչն ապահովում է նրանց քաղաքական անկախությունը և մասնագիտական անաչառությունը:

Պալատը իր կառավարման գործընթացը, գործունեությունը կազմակերպում է ինքնուրույն, ինչը ևս ամրապնդում է կառույցի անկախությունը:

Պալատը տարեկան հաղորդմամբ հանրությանն է ներկայացնում տվյալ տարվա իր գործունեությունը և, անհրաժեշտության դեպքում, նախաձեռնում միջոցառումներ՝ ապահովելու կառույցի աշխատանքների համապատասխանությունը հաշվետվողականության և կառավարման բարձր չափանիշներին:

### 3. Հաղորդակցությունը

INTOSAI-ի՝ բարձրագույն հաշվեքննիչ մարմինների պարտականությունների և լավ գործառնական պրակտիկայի վերաբերյալ առաջարկները՝ շեշտում են, որ արտաքին և ներքին հաղորդակցությունը պետք է ապահովի թափանցիկություն, հաշվետվողականություն և հանրային վստահության ամրապնդում: ԲՀՄ-ների հաղորդակցության աստիճանը պետական կառավարման հավասարակշռման էական գործոն է և համակարգի արդյունավետության առանցքային բաղադրիչ:

Պետական կառավարման համակարգում ԲՀՄ-ի դերի և նշանակությանը համարժեք հանրային ընկալումը նպաստում է հավելյալ արժեքի ստեղծմանը: Պալատը հրապարակայնորեն ներկայացնում է իր գործունեությունը, հաշվետվությունները և արձանագրված արդյունքները՝ նպաստելով պետական կառավարման արդյունավետության բարձրացմանը, հանրային վստահության ամրապնդմանը և շահագրգիռ կողմերի պահանջարկի ձևավորմանը:



#### Արտաքին հաղորդակցությունը

Պալատն իր Ռազմավարական զարգացման ծրագրի միջոցով, որպես առաջնահերթություն է սահմանել հաղորդակցության բարելավումը և ռազմավարական գործընկերությունը, որը խթանում արտաքին շահառուների ներգրավվածությունը և բարելավում փոխգործակցությունը Ազգային ժողովի, պետական մարմինների, քաղաքացիական հասարակության, ինչպես նաև միջազգային կառույցների և այլ պետությունների ԲՀՄ-ների հետ:

#### Միջազգային համագործակցություն

Հաշվեքննիչ պալատն ակտիվորեն ներգրավված է արտաքին պետական հաշվեքննության միջազգային համայնքում իրականացվող գործընթացներում: Պալատն անդամակցում է միջազգային կազմակերպություններին (INTOSAI, EUROSAI, ASOSAI) և մասնակցում է արդիական թեմաների զարգացումներին համարժեք արձագանքելու նպատակով ձևավորված աշխատանքային խմբերի աշխատանքներին:

<sup>1</sup> ԲՀՄ-ները պետք է հաղորդակցվեն շահագրգիռ կողմերի հետ՝ նպաստելու համար շահագրգիռ կողմերի իրազեկվածությանը՝ հանրային հարվածում թափանցիկության և հաշվետվողականության անհրաժեշտության մասին, բարձրացնելու համար գիտելիքներն ու ըմբռնումը ԲՀՄ-ի՝ որպես հանրային հարվածի անկախ աուդիտորի դերի և պարտականությունների վերաբերյալ, ապահովելու համար նրանց ըմբռնումը ԲՀՄ-ի աուդիտորական գործունեության և դրա արդյունքների վերաբերյալ: (INTOSAI 12, Սկզբունք 6):

**INTOSAI/EUROSAI աշխատանքային խմբերում մասնակցություն**

INTOSAI Բնապահպանական հաշվեքննության աշխատանքային խումբ	INTOSAI ԿԶՆ-ների և կայուն զարգացման ցուցանիշների աշխատանքային խումբ	INTOSAI Պետական գնումների հաշվեքննության աշխատանքային խումբ	INTOSAI Հետհսկողության հաշվեքննության աշխատանքային խումբ
EUROSAI Տեղեկատվական տեխնոլոգիաների աշխատանքային խումբ	EUROSAI Բնապահպանական հաշվեքննության աշխատանքային խումբ	EUROSAI Աղետների ֆոնդերի հաշվեքննության աշխատանքային խումբ	ԱՊՀ ԲՀՄ-ների Ստանդարտների մշակման աշխատանքային խումբ

Բացի այդ, Պալատը երկկողմ համագործակցության ձևաչափով ակտիվացնում է համագործակցությունը նաև այլ երկրների ԲՀՄ-ների հետ, մասնավորապես՝ Շվեդիայի Թագավորության ազգային աուդիտի գրասենյակի, Լատվիայի Հանրապետության պետական աուդիտի գրասենյակի, ինչպես նաև Արաբական Միացյալ Էմիրությունների հաշվետվողականության մարմնի հետ:



**Հիմնական իրադարձություններ**

- Փետրվար — ԵԱՏՄ Համատեղ հսկողություն (մաքսատուրքեր)
- Մեպտեմբեր — ՀՊ Շվեդիայի ԲՀՄ հուշագիր (2025-2030)
- Հոկտեմբեր — ԱՊՀ երկրների ԲՀՄ-ների ղեկավարների խորհրդի 21-րդ նիստ (Շարմ Էլ Շեյխ)
- Ապրիլ — ԵԱՏՄ մարմիններում արտաքին աուդիտ
- Հոկտեմբեր — INTOSAI XXV Համագումար (Շարմ Էլ Շեյխ)

## Կարողությունների զարգացում և վերապատրաստում

Մարտ – Շվեդիայի ԲՀՄ, Համագործակցության կարիքներն ու հնարավորությունները (Երևան, ՀՀ)

Հունիս - EUROSAI-ի Ռազմավարական նպատակ 2, ԲՀՄ-ների որակի կառավարման ISSAI 140 ստանդարտ

Սեպտեմբեր- ՇՀԿ Երիտասարդ աուդիտորների Դասընթաց (Նանկին, Չինաստան)

Նոյեմբեր- Շվեդիայի ԲՀՄ, Ֆինանսական և կատարողականի հաշվեքննության վերապատրաստում (Երևան, ՀՀ)

Մայիս- Շվեդիայի ԲՀՄ, Համագործակցության 5 ամյա ծրագրի ոլորտների գնահատում (Երևան, ՀՀ)

Օգոստոս- INTOSAI WGPPA և WGSDG KSDI հանդիպումներ (Սանկտ Պետերբուրգ, ՌԴ)

Հոկտեմբեր- ԱԶԲ Հանրային հատվածի հաշվապահության տարածաշրջանային ֆորում (Մակաոյի, Ֆիլիպիններ)

Պալատը աստիճանաբար ընդլայնում է հաղորդակցության շրջանակը՝ ներդնելով համագործակցության գործընթացներ նաև քաղաքացիական հասարակության և զանգվածային լրատվամիջոցների հետ, խթանելով հանրային հսկողությունն ու թափանցիկ կառավարման մշակույթի զարգացումը:

Պալատը հաշվեքննությունների արդյունքները ներկայացրել է Ազգային ժողովին, Կառավարությանը, հաշվեքննության ենթարկված մարմիններին և հրապարակել իր պաշտոնական ինտերնետային հարթակներում՝ ապահովելով թափանցիկություն և հանրային իրազեկում (*լրես՝ Հավելված Ա.*): Վերջինը արտաքին հաղորդակցության կարևոր բաղադրիչ է: Այն հնարավորություն է տալիս հանրության լայն շրջանակներին, ներառյալ՝ պետական գործիչներ, ոլորտի մասնագետներ և լրատվամիջոցների ներկայացուցիչներ, տեղեկացված լինել հանրային կառավարման համակարգում հաշվեքննությունների հաշվետվություններով արձանագրված մարտահրավերներին և դրանց լուծման հնարավոր ուղղությունների վերաբերյալ առաջարկներին:

2025 թվականին Պալատը իր հաշվեքննության առաջնահերթությունները և տարեկան գործունեության ծրագիրը հաստատումից առաջ հաղորդակցել է Ազգային ժողովին և Կառավարությանը, ինչի արդյունքում ստացված դիտարկումները նպաստել են այդ

ռազմավարական նշանակության փաստաթղթերի որակի բարելավմանը և դրանց ու շահառուների սպասումների հնարավորինս մերձեցմանը:

## 4. Խորհրդարանական, Կառավարության և Դատախազության ներգրավվածությունը

**Ազգային ժողովը**, որպես օրենսդիր մարմին, վերահսկողություն է իրականացնում գործադիր իշխանության նկատմամբ՝ և հաշվեքննությունների արդյունքների ներկայացումը Ազգային ժողովին հնարավորություն է ընձեռում որոշումները կայացնել՝ ունենալով Պալատի մասնագիտական և անկողմնակալ կարծիքը: Պալատի առաջարկությունների քննարկումը Ազգային ժողովում բարձրացնում է հանրային սեփականության կառավարման թափանցիկությունը և ամրապնդում հանրային վստահությունը՝ միաժամանակ ստեղծելով նախադրյալներ հանրային հսկողության համար:

**Կառավարության (հաշվեքննության ենթարկված մարմիններ)** հետ հաղորդակցությունը ստեղծում է երկկողմանի վստահության հարթակ. Պալատը ստանում է կարևոր հետադարձ կապ՝ իր գործունեության արդյունքների իրական արժեքը գնահատելու համար: Ստացված դիտարկումները նպաստում են՝ Պալատի հաշվեքննության հաշվետվությունները, գործունեության ծրագրերն ու կառույցի բարեփոխման ռազմավարական ուղղությունները բարելավելուն:

**Դատախազության** հետ հաղորդակցությունը ևս կարևոր է հանրային կառավարման նկատմամբ վստահության ամրապնդման և արդյունավետության բարձրացման համար: Պալատը հետևողականորեն գնահատում է հանրային սեփականության կառավարման օրինականությունն ու արդյունավետությունը, անհրաժեշտության դեպքում ներկայացնում համապատասխան նյութեր Գլխավոր դատախազությանը, ինչը նպաստում է կանխարգելիչ գործառույթների իրականացմանը և չարաշահումների ռիսկերի նվազեցմանը:



## Ներքին հաղորդակցությունը

Պալատի արդյունավետ գործունեությունն ապահովելու համար առաջնային նշանակություն ունի հստակ և օպերատիվ ներքին հաղորդակցությունը: Պալատի ռազմավարությունը ներառում է համակարգված տեղեկատվության փոխանակում բոլոր ստորաբաժանումների միջև՝ ապահովելով հաշվետվողականությունը, գործընթացների պարզությունն ու պրոֆեսիոնալ որակի պահպանությունը:

Ներքին հաղորդակցության արդյունավետության բարձրացման նպատակով, ժամանակակից տեխնոլոգիական լուծումներով, Պալատը նախաձեռնել է և առաջիկայում նախատեսում է ավարտին հասցնել Ինտրանետ (Intranet) ցանցի ներդրումը: Ցանցը հնարավորություն կընձեռի էլեկտրոնային միջավայրում կազմակերպել՝ աշխատողների միջև տվյալների, փորձի և լավագույն պրակտիկաների փոխանակումը և կառույցում առկա (ձևավորվող) տեղեկատվության թվային ինստիտուցիոնալացմանը: Ակնկալվում է, որ Ինտրանետի ներդրմամբ Հաշվեքննիչ պալատում տեղի կունենա գործունեության կազմակերպման թվային փոխակերպում՝ նախադրյալներ ստեղծելով աշխատանքի արտադրողականության աճի համար: Բացի այդ, այսպիսի ցանցի ներդրումն ունի նաև կառույցի աշխատանքների ներքին մշակույթը բարելավելու և աշխատակիցների մասնագիտական զարգացումը խթանելու ներուժ:

## 5. Ռեսուրսների կառավարումը

### Բյուջեն և ծախսերը


Պալատը 2025 թվականին գործել է հաստատված բյուջեի շրջանակներում՝ ապահովելով ֆինանսական միջոցների պատասխանատու և արդյունավետ կառավարում:

Պալատի բյուջեի պլանով նախատեսված մոտ 1 մլրդ ՀՀ դրամից փաստացի ծախսվել է **832** մլն ՀՀ դրամ, ապահովելով մոտ **82.7%** բյուջեի օգտագործում:

Ծախսերի ամենամեծ բաժինը կազմել են աշխատողների աշխատանքի վարձատրությունը՝ **732.5** մլն ՀՀ դրամ կամ ընդամենը ծախսերի շուրջ **88.1%**-ը, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ Պալատի գործունեության կազմակերպման համար նախատեսված բյուջեում զգալի կշիռ ունեցող գործոնը հաշվեքննողների վարձատրության բաղադրիչն է:

Միաժամանակ միջոցներ են օգտագործվել նաև կառույցի գործունեությունը կազմակերպելու նպատակով՝ տարածքի վարձակալություն, գործուղումներ, տեղեկատվական և համակարգչային ծառայություններ, կառավարչական և կոմունալ ծառայությունների ապահովում, ինչպես նաև աշխատակազմի մասնագիտական զարգացում:

Ֆինանսական միջոցների՝ նախատեսվածից պակաս օգտագործումը հիմնականում հաստիքների թերհամալրվածության և կանխատեսված միջազգային միջոցառումներին՝ տարբեր պատճառներով, կառույցի ներկայացուցիչների մասնակցության աստիճանի հետևանք է:



Պալատն իր հաշվապահական հաշվառումը վարում և իր ֆինանսական հաշվետվությունները պատրաստում է ինչպես ՀՀՀՀՍ-ի համաձայն, այնպես էլ ֆինանսների նախարարի հրամանով<sup>2</sup> սահմանած բյուջետային հաշվետվությունների կազմման պահանջների համաձայն: ՀՀՀՀՍ-ով պատրաստված հաշվետվությունները հրապարակվում են Պալատի պաշտոնական [www.armsai.am](http://www.armsai.am) և ՀՀ հրապարակային ծանուցումների [www.azdarar.am](http://www.azdarar.am) ինտերնետային կայքերում, իսկ բյուջետային հաշվետվությունները ներկայացվում են ֆինանսների նախարարություն:

Պալատի տարեկան ֆինանսական հաշվետվությունները ենթակա են ամենամյա արտաքին աուդիտի՝ աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան:

Համաձայն արտաքին աուդիտի [կարծիքի](#), Հաշվեքննիչ պալատի ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հաշվեքննիչ պալատի ֆինանսական վիճակը 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքը՝ ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտի համաձայն (ՀՀՀՀՍ):

<sup>2</sup> Ֆինանսների նախարարի 13.03.2019թ. թիվ 254-Ն հրամանով հաստատված «Բյուջեների կատարման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց ենթակա հիմնարկների ֆինանսական գործունեության հետ կապված հաշվետվությունների կազմման, ներկայացման և ամփոփման ընդհանուր պայմանները» և «Հաշվետվությունների առանձին տեսակների կազմման ու ներկայացման առանձնահատկությունների մասին հրահանգ»ը:

## Որակավորումը

2024 թվականին ընդունված «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքի նոր խմբագրությամբ (ՀՕ-240-Ն) Պալատում ներդրվել է հանրային ծառայության նոր տեսակ՝ **Հաշվեքննիչ պալատի ծառայություն**: Օրենքի պահանջներին համապատասխան վերանայվել են Պալատի կառուցվածքը և պաշտոնների անվանացանկը:

Անցումային կարգավորումների շրջանակում հաշվեքննություն իրականացնող ստորաբաժանումների այն ծառայողները, որոնք բավարարել են օրենքով սահմանված նվազագույն որակավորման պահանջները, շարունակել են պաշտոնավարել համարժեք պաշտոններում: Հաշվետու ժամանակահատվածում 11 հաշվեքննող ստացել է աուդիտորի որակավորում, ինչը կարևոր քայլ է Պալատի մասնագիտական կարողությունների ամրապնդման և հաշվեքննությունների որակի բարձրացման ուղղությամբ:

## Ենթակառուցվածքների կառավարումը

Պալատի գործունեությունը ներկայում իրականացվում է երկու տարբեր մասնաշենքերում, որոնցից մեկը Ազգային ժողովի կողմից տրամադրված է անհատույց օգտագործման հիմունքներով, իսկ մյուսը վարձակալվում է: Այս իրավիճակը հանգեցնում է պետական բյուջեի շարունակական ծախսերի և միաժամանակ սահմանափակում է կառույցի աշխատանքների արդյունավետ կազմակերպման հնարավորությունները:

Միջազգային փորձը և բարձրագույն հաշվեքննիչ մարմինների գործունեությունը կարգավորող սկզբունքները ցույց են տալիս, որ ԲՀՄ-ների գործունեությունը առավել արդյունավետ է կազմակերպվում միասնական և կենտրոնացված ենթակառուցվածքի պայմաններում: Մասնավորապես, INTOSAI-ի կողմից ընդունված INTOSAI-P 10- Մեխիկոյի հռչակագիրը սահմանում է, որ ԲՀՄ-ները պետք է ունենան անհրաժեշտ և ողջամիտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

Այս համատեքստում կառույցի գործունեության տարածքային տարանջատվածությունը կարող է բացասաբար ազդել ներքին հաղորդակցության, աշխատանքային գործընթացների համակարգման, ռեսուրսների արդյունավետ օգտագործման, հետևաբար Պալատի գործունեության ինստիտուցիոնալ արդյունավետության ապահովման համար, ինչը կարևոր նախապայման է հանրային ֆինանսների վերահսկողության բարձր որակի ապահովման համար:

# 6. Ռազմավարական զարգացումը և առաջընթացը

2025 թվականին Պալատի գործունեությունը շարունակել է իրականացվել 2024–2025 թվականների ռազմավարական զարգացման ծրագրի շրջանակում: Այն ուղղված էր հաշվեքննության հիմքերի կատարելագործմանը, միջազգային ստանդարտների կիրառության ընդլայնմանը, մասնագիտական կարողությունների զարգացմանը և հաշվեքննությունների արդյունքների արդյունավետ հաղորդակցմանը:


Միաժամանակ, ՏՀԶԿ ՍԻԳՄԱ ծրագրի փորձագիտական աջակցությամբ և Պալատի ինստիտուցիոնալ ռեսուրսների արդյունավետ ներգրավմամբ ձևավորվել է 2026–2032 թվականների ռազմավարական զարգացման նոր ծրագիրը՝ պայմանավորված «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում կատարված փոփոխություններով, որը միտված է արտաքին պետական հաշվեքննության համակարգի կայուն և երկարաժամկետ զարգացման ապահովմանը, ինչպես նաև դրա ազդեցության հետագա բարձրացմանը՝ հանրային կառավարման արդյունավետության բարելավման նպատակով:

## 2024-2025թթ. Ծրագրի կատարման ամփոփ հաշվետվություն

### Հիմնական նպատակները

 <p><b>Իրավական դաշտ</b></p> <p>Վերանայվել են նոր խմբագրությամբ ընդունված օրենքից բխող բոլոր ներքին հրավական ակտերը</p>	 <p><b>Ազդեցություն</b></p> <p>Ներդրվել են հաշվեքննության պլանավորման արդյունավետ մեխանիզմներ</p>	 <p><b>Մեթոդաբանություն</b></p> <p>Հաշվեքննության մեթոդաբանությունները համապատասխանեցվել են ISSAI միջազգային ստանդարտներին</p>
 <p><b>Մասնագիտական կարողություններ</b></p> <p>Ներդրվել է ՄՌԿ նոր համակարգ, մասնագիտական կարողությունների զարգացման և վերապատրաստման ծրագրեր</p>	 <p><b>Հաղորդակցություն</b></p> <p>Կատարելագործվել է հաղորդակցությունը շահագրգիռ կողմերի հետ՝ ազդեցության բարձրացման նպատակով</p>	

### Ռազմավարության իրականացման ժամանակացույց



## Նոր ռազմավարական ծրագիրը 2026–2032թթ.

Հաստատված է Հաշվեքննիչ պալատի կողմից 2025 թ. նոյեմբերի 27-ին (Որոշում թիվ 82-Լ)

Պալատի նոր 2026-2032թթ. ռազմավարական զարգացման ծրագիրը ձևավորում է Պալատի գործունեության միասնական ռազմավարական շրջանակը՝ ուղղված հանրային կառավարման արդյունավետության և հանրային ֆինանսների հաշվետվողականության բարձրացմանը: Այն համախմբում է Պալատի հաշվեքննությունների և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման առաջնահերթությունները և հիմնական ուղղությունները, որոնք միասին նպաստում են բարձրորակ և ազդեցիկ հաշվեքննությունների իրականացմանը, ինչպես նաև Պալատի ինստիտուցիոնալ զարգացմանը: Այն մշակվել է՝ հաշվի առնելով Պալատի 2024-2025թթ. ռազմավարական զարգացման ծրագրի արդյունքները, միջնաժամկետ հաշվեքննության առաջնահերթությունները և ինքնավերլուծության հիման վրա կատարված ներքին գնահատումների արդյունքները:

### Կարողությունների ռազմավարական առաջնահերթությունները



#### Հաշվեքննության բարձր որակ

Բարձր որակ և նշանակալի ազդեցություն

ISSAI ստանդարտներ և թվայնացում

Մեթոդաբանությունների բարելավում, AI կիրառություն, որակի կառավարման համակարգ, հետհսկողության ինստիտուցիոնալացում



#### Բարելավված կառավարում

Ժամանակակից կառավարման մոդել

Էթիկայի, Աուդիտի և Որակի հսկողության կոմիտեներ

Կոմիտեների գործունեության կարգավորում, ռազմավարական ծրագրերի մոնիթորինգ, ռիսկերի կառավարում



#### Մարդկային կապիտալ

Պրոֆեսիոնալ կադրեր և ինստիտուցիոնալ կարողություններ

Մարդկային ռեսուրսների համակարգ

HRIS ներդրում, շարունակական մասնագիտական զարգացում, կազմակերպական մշակույթի ամրապնդում



#### Հաղորդակցություն

Ռազմավարական գործընկերություններ

Թափանցիկություն և ցանցեր

ԱԺ-ի հետ հաղորդակցություն, հանրային իրազեկում, INTOSAI/EUROSAI/ASOSAI ցանցերում ակտիվ մասնակցություն

### Հաշվեքննության առաջնահերթ ոլորտներ



#### Առողջապահություն

Մատչելի, հասանելի, որակյալ



#### Կրթություն

Ցկյանս որակյալ կրթություն



#### Շրջակա միջավայր

Մաքուր և անվտանգ



#### Արդարադատություն

Մատչելի և արդյունավետ



#### Տնտեսություն

Գիտահեն և մրցակցային



#### Պետական ֆինանսներ

Կառավարման ինստիտուտների զարգացում



#### Համայնքներ

Ներդաշնակ զարգացող

## 7. Ռիսկերը

Ռազմավարական առաջնահերթությունների բազմազանությունից ելնելով, Հաշվեքննիչ պալատն առանձնացրել է այն հիմնական ռիսկերը, որոնց արդյունքում անհրաժեշտություն կարող է առաջանալ վերանայելու նախատեսված ուղղությունները:

**Հանրային հատվածի փոփոխվող միջավայր**

**Ֆինանսական ռիսկեր**

**Որակյալ մարդկային ռեսուրսներով համալրվածություն**

**Ֆորս-մաժորային իրավիճակներ**

**Գործառնական արդյունավետության ռիսկ**

Վերոնշյալ ռիսկերը մշտապես առկա են և ուղեկցում են կառույցի գործունեությանը: Դրանց արդյունավետ կառավարման և նվազեցման ուղղությամբ շարունակական քայլերը հանդիսանում են ռազմավարական զարգացման կարևոր նախապայման:

## ԲԱԺԻՆ 2. ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Պալատի գործունեությունը ներառում է ինչպես կառավարման (կազմակերպչական), այնպես էլ հաշվեքննությունների իրականացման հետ կապված գործառույթներ:

### Կառավարում

Կառավարման տեսանկյունից պալատի գործունեությունն ուղղված է իր լիազորությունների արդյունավետ և համակարգված իրականացման կազմակերպմանը: Պալատը գործում է **կոլեգիալ սկզբունքով**, որի շրջանակում գործունեության հիմնական ուղղությունները, հաշվեքննության արդյունքները և կազմակերպչական հարցերը քննարկվում և հաստատվում են պալատի նիստերում:

Պալատի գործունեության կազմակերպումը ներառում է աուդիտի, էթիկայի, որակի հսկողության և գործադիր մասնագիտացված կոմիտեների միջոցով կառավարման մեխանիզմներ, որոնք ապահովում են ներքին հսկողությունը, հաշվեքննությունների որակի բարձր մակարդակը և էթիկական չափանիշների պահպանումը: Պալատում գործող աուդիտի, էթիկայի, որակի հսկողության կոմիտեները հանդիսանում են գործադիր իրավասություններից անկախ կառուցակարգեր, որոնք հաշվետու են Պալատին և իրենց գործունեության արդյունքներով ներկայացնում են մասնագիտական եզրակացություններ: Կոմիտեների գործառույթները կրում են օժանդակ և վերահսկողական բնույթ, իսկ վերջնական որոշումները ընդունվում են Պալատի նիստերում՝ ապահովելով կոլեգիալ կառավարման սկզբունքը:

### Հաշվեքննություն

Հաշվեքննիչ պալատի գործունեության հիմնական բովանդակությունը պետական և համայնքային սեփականության օգտագործման նկատմամբ անկախ արտաքին հաշվեքննության իրականացումն է: Պալատը իրականացնում է՝ ֆինանսական, համապատասխանության և կատարողականի կամ համակցված հաշվեքննություններ, որոնց միջոցով գնահատվում են հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում օրինականության և արդյունավետության պահպանումը՝ հանրությանն ու Ազգային ժողով ներկայացնելով ժամանակին մասնագիտական ու անկողմնակալ տեղեկատվություն:

# 1. Հաշվեքննիչ պալատի կառավարումը

Հաշվեքննիչ պալատը կոլեգիալ մարմին է և կազմված է 7 անդամից՝ նախագահ և վեց անդամներ: Պալատում ներդրված է զսպումների և հակակշիռների մեխանիզմ, ըստ որի գործում են՝ Գործադիր կոմիտեն և գործադիր իրավասություններից անկախ՝ Աուդիտի, Էթիկայի և Որակի հսկողության կոմիտեները:



**Ատոմ Զանջուղայան**  
Պալատի նախագահ

Նախագահում է Պալատի **Գործադիր կոմիտեն**, ապահովում է Պալատի բնականոն գործունեությունը՝ ղեկավարելով Պալատի ռազմավարական զարգացման ուղղությունները:



**Կարեն Առուստամյան**  
Պալատի անդամ

**Գործադիր կոմիտեի** անդամ է և համակարգում է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության վարչության աշխատանքները:



**Ժիրայր Մխիթարյան**  
Պալատի անդամ

**Գործադիր կոմիտեի** անդամ է և համակարգում է կատարողականի հաշվեքննության վարչության աշխատանքները:



**Վեղամ Հովեյան**  
Պալատի անդամ

Ղեկավարում է **Աուդիտի կոմիտեն** և համակարգում է ներքին աուդիտի բաժնի գործունեությունը: Միաժամանակ հանդիսանում է որակի հսկողության և էթիկայի կոմիտեների անդամ:



**Եղիշե Սողոմոնյան**  
Պալատի անդամ

Ղեկավարում է **Էթիկայի կոմիտեն**: Պատասխանատու է հաշվեքննության էթիկայի կանոնների պահպանման համար և միաժամանակ հանդիսանում է աուդիտի կոմիտեի անդամ:



**Գագիկ Բարսեղյան**  
Պալատի անդամ

Ղեկավարում է **Որակի հսկողության կոմիտեն**: Պատասխանատու է հաշվեքննության որակի հսկողության անկախ վերանայման համար և միաժամանակ հանդիսանում է աուդիտի կոմիտեի անդամ:



**Հակոբ Միհրանյան**  
Պալատի անդամ

Հանդիսանում է **Էթիկայի և Որակի հսկողության կոմիտեի** անդամ:

## 2. Հաշվեքննությունը

Հաշվեքննության գործընթացը բաղկացած է հաշվեքննության իրականացման (այդ թվում՝ պլանավորման, կատարման և հաշվետվության) ու հետհսկողության փուլերից:



### Իրականացում

Արտաքին պետական հաշվեքննությունների պլանավորումը, կատարումը և հաշվետվությունը

- **Պլանավորում**  
Ռիսկերի գնահատում, ընթացակարգերի և դրանց կատարման ժամանակացույցերի սահմանում
- **Կատարում**  
Հաշվեքննության ապացույցների կուտակում
- **Հաշվետվություն**  
Հաշվեքննության արդյունքների ամփոփում ու ներկայացում



### Հետհսկողություն

Ներկայացված առաջարկությունների իրագործման գնահատում

Հաշվեքննություններն իրականացվում են ֆինանսական, համապատասխանության և կատարողականի տեսակներով: Առաջին երկու տեսակներով գնահատվում է հանրային ռեսուրսների օգտագործման օրինականությունը, իսկ երրորդով՝ արդյունավետությունը, ներառյալ՝ տնտեսումը, ծախսային և նպատակային արդյունավետությունը:

Հաշվեքննիչ պալատը շահագրգիռ է իր տարեկան ծրագրերը հանրային օբյեկտիվ և ռացիոնալ պահանջարկին առավելագույնը համահունչ դարձնելու հարցում:

Պալատի գործունեության արդյունքներով ձևավորվող եզրակացությունները, հաշվետվությունները և առաջարկությունները նպաստում են հանրային ֆինանսների կառավարման բարելավմանը, պետական ծրագրերի արդյունավետ իրականացմանը և հանրային հաշվետվողականության ամրապնդմանը:



# Պլանավորումը

Բարձրագույն հաշվեքննիչ մարմինների միջազգային ստանդարտների (ISSAI 100 և ISSAI 200) համաձայն՝ հաշվեքննության պլանավորումը հանդիսանում է հաշվեքննության գործընթացի հիմնարար փուլ և իրականացվում է երկու մակարդակով:



Ընդհանուր պլանավորում



Հաշվեքննության պլանավորում

## Մակարդակ 1

Գնահատվում են հանրային հատվածի հիմնական ռիսկերը, սահմանվում են հաշվեքննության թեմաները և ձևավորվում է հաշվեքննության տարեկան ծրագիրը:

## Մակարդակ 2

Սահմանվում է հաշվեքննության նպատակը, շրջանակը, չափանիշները, կիրառվող մեթոդները և հաշվեքննությունն իրականացնող խմբի կազմը:

Հաշվեքննիչ պալատն հաստատում է իր կողմից կազմված արտաքին պետական հաշվեքննության տարեկան ծրագիրը (այսուհետև՝ Գործունեության ծրագիր), որի մշակման գործընթացը բաղկացած է երկու փուլից՝

01

Միջնաժամկետ հորիզոնի համար առաջնահերթությունների մշակում


02

Առաջիկա տարվա գործունեության ծրագրի մշակում

Հաշվեքննության միջնաժամկետ առաջնահերթությունների սահմանումը նպատակ է հետապնդում հաշվեքննության թեմաների ընտրությունը և Հաշվեքննիչ պալատի ամենամյա գործունեության ծրագրերում դրանց ներառումը կազմակերպել ուղղվածության պլանավորման տրամաբանությամբ:

Հաշվեքննության 2026-2028թթ. առաջնահերթությունները<sup>3</sup>


<sup>3</sup> Հաստատված է Հաշվեքննիչ պալատի 2025 թվականի հոկտեմբերի 7-ի [թիվ 67-Լ որոշմամբ](#):



### Հաշվեքննության 2025 թվականի տարեկան գործունեության ծրագիրը<sup>4</sup>

Նոր իրավակարգավորումների համաձայն՝ Հաշվեքննիչ պալատի 2025 թվականի գործունեության ծրագիրը ձևավորվել է նոր ձևաչափով, որն առավել հստակ տարանջատում է Պալատի սահմանադրական և օրենսդրական մանդատից բխող հիմնական գործառույթները, միջազգային պարտավորություններից բխող միջոցառումները և ինստիտուցիոնալ զարգացման ուղղությունները:

#### Ծրագրի կառուցվածքը



<sup>4</sup> Հաստատված է Հաշվեքննիչ պալատի 2024 թվականի նոյեմբերի 29-ի [թիվ 123-Լ որոշմամբ](#):

## Կատարումը

Հաշվեքննություններն իրականացվում են **ֆինանսական, համապատասխանության և կատարողականի** հաշվեքննության տեսակներով:

Յուրաքանչյուր հաշվեքննություն իրականացվում է հաստատված հաշվեքննության առաջադրանքի հիման վրա, որով սահմանվում են դրա օբյեկտը, առարկան, տեսակը, իրականացման ժամկետը, ընդգրկվող ժամանակաշրջանը և հաշվեքննությունն իրականացնող խմբի կազմը: Հաշվեքննությունն իրականացվում է հաշվեքննության առարկայի համար իրավական ակտերով և քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակում կնքված գործարքներով սահմանված ժամանակաշրջանի կամ փուլի ավարտից հետո:

Հաշվեքննության իրականացման փուլում կիրառվում է հարցման, արտաքին հաստատման, զննման, դիտարկման, վերահաշվարկի, վերակատարման և վերլուծական ընթացակարգեր, որոնց միջոցով ձեռք են բերվում բավարար և համապատասխան հաշվեքննության ապացույցներ:

## Հաշվետվությունը


Հաշվեքննությունն ավարտվում է հաշվեքննության հաշվետվության կամ ընթացիկ եզրակացության հաստատմամբ: Իր գործունեության ընթացքում, Հաշվեքննիչ պալատը պարբերաբար հանրությանը, Ազգային ժողովին և Կառավարությանն է ներկայացնում հաշվետվություններ հանրային միջոցների օգտագործման արդյունավետության և օրինականության վերաբերյալ:

Պետական բյուջեի կատարման նկատմամբ հաշվեքննության արդյունքները ներկայացվում են **Պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացության** միջոցով, որը ներառում է պետական բյուջեի կատարման վերաբերյալ կարծիք: Պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը կազմվում է օգտագործելով պետական բյուջեի երեք, վեց և ինն ամիսների կատարման ֆինանսական հաշվեքննության **ընթացիկ եզրակացությունները**:

Թեմատիկ հաշվեքննության հիմնական արդյունքներն ամփոփվում են **հաշվեքննության հաշվետվության միջոցով**, որի հաստատմամբ ավարտվում է հաշվեքննությունը:

### 3. Պետական բյուջեի կատարման հաշվեքննությունը

ՀՀ Սահմանադրության համաձայն, Հաշվեքննիչ պալատը պարտավոր է Ազգային ժողով ներկայացնել ՀՀ պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը: Հաշվեքննիչ պալատը նշյալ եզրակացությունը ձևավորում է պետական բյուջեի երեք, վեց և ինն ամիսների կատարման ֆինանսական հաշվեքննության ընթացիկ եզրակացությունների հիման վրա: Եզրակացությունը ներառում է հաշվեքննության **կարծիքը** պետական բյուջեի կատարման վերաբերյալ<sup>5</sup>:



Հաշվի առնելով, որ պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացության ձևավորումն անընդհատ գործընթաց է և տեղի է ունենում 2025, 2026 թվականներին իրականացվող հաշվեքննությունների միջոցով, գործունեության ծրագրի այս կետի կատարման ժամկետը սահմանված է 2025-2026 թվականներ:

**Հաշվեքննիչ պալատը ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը (կարծիքը) սահմանված կարգով և ժամկետում ներկայացրել է Ազգային ժողով:**

Սույն տարեկան հաղորդումը չի ներառում ՀՀ պետական բյուջեի կատարման եզրակացությունը՝ հաշվի առնելով վերջինիս ՀՀ Սահմանադրությամբ և Հաշվեքննիչ պալատի մասին օրենքով սահմանված կարգով ՀՀ Ազգային ժողովին, որպես առանձին փաստաթուղթ ներկայացնելու հանգամանքը:

<sup>5</sup> ՀՕ-240-Ն «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենք, 2024թ., հոդված 24:

## Արդյունքները

Հաշվեքննիչ պալատը 2024 և 2025 թվականներին ֆինանսական և համապատասխանության եռամսյակային հաշվեքննություններ է իրականացրել 2024 թվականի ՀՀ պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման նկատմամբ: Հաշվեքննությունների արդյունքների հիման վրա Հաշվեքննիչ պալատը պատրաստել է 2024 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը (այսուհետ՝ եզրակացություն), իսկ եռամսյակային հաշվեքննությունների արդյունքները ներկայացրել է ընթացիկ եզրակացություններում:

📄 Հաշվեքննիչ պալատի «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ» եզրակացությունը հաստատվել է Հաշվեքննիչ պալատի 2025 թվականի մայիսի 26-ի թիվ 36-Լ [որոշմամբ](#):

8

Հաշվեքննության օբյեկտներ

83

Արձանագրված անհամապատասխանություններ

6

Խեղաթյուրումներ (3,107.1 մլն դրամ)

48

Ներկայացված առաջարկություններ

## Նշանակալի անհամապատասխանություններ

2024 թվականի ՀՀ պետական բյուջեի կատարման հաշվեքննության շրջանակում Հաշվեքննիչ պալատն իրականացրել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն հանրային իշխանության 8 մարմիններում՝ ընդգրկելով բյուջեի ծախսերի շուրջ 80 տոկոսը: Արձանագրված անհամապատասխանությունները հիմնականում կրում են համակարգային բնույթ՝

- ✓ ծրագրերի և ծախսերի դասակարգման թերություններ,
- ✓ ՀՀՀՀՍ-ով հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվությունների թերություններ,
- ✓ սկզբնական հաշվառման փաստաթղթերի բացակայություն կամ թերի ձևակերպում,
- ✓ ներքին հսկողության և ներքին աուդիտի համակարգերի անբավարար արդյունավետություն,
- ✓ գնումների գործընթացների ընթացակարգային թերություններ,
- ✓ կապիտալ ծրագրերի իրականացման, նախագծման և տեխնիկական հսկողության համակարգային խնդիրներ:

## 4. Թեմատիկ հաշվեքննությունները

Թեմատիկ հաշվեքննությունները Հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագրով նախատեսված հաշվեքննությունների այլ ծրագրային կետեր են<sup>6</sup>, բացի պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացության կազմման նպատակով իրականացվող՝ հաշվետու տարվա պետական բյուջեի ֆինանսական հաշվեքննությունը:

Հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագրով սահմանված թեմատիկ հաշվեքննությունների առարկաների և տեսակների ընտրության կարգը սահմանվում է ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանությամբ, որը հրապարակված է Հաշվեքննիչ պալատի պաշտոնական կայքում:

Պալատի գործունեության ծրագրի կատարման ժամանակացույցը տարբերվում է բյուջետային տարվանից, հետևաբար 2025 թվականի գործունեության արդյունքներում ներառվում են ինչպես նախորդ տարվա գործունեության ծրագրով պլանավորված և հաշվետու տարում ավարտված, այնպես էլ՝ հաշվետու տարում պլանավորված և նույն տարում ավարտված հաշվեքննության արդյունքները:

2025 թվականին հրապարակվել են 14 ընթացիկ եզրակացություններ, 2 միջանկյալ հաշվետվություններ, 5 հաշվեքննության հաշվետվություններ և 2 հետհսկողության հաշվետվություններ (բացառությամբ օրենքով սահմանված գաղտնիք պարունակող 2 ընթացիկ եզրակացությունների):

2025թ. Գործունեության ծրագրի մշակման ընթացքում հաշվի է առնվել այն հանգամանքը, որ մի շարք թեմաներ ներառված էին նաև Հաշվեքննիչ պալատի 2024 թվականի գործունեության ծրագրում, սակայն դրանցից մի մասի դեպքում ոլորտային քաղաքականությունների իրականացումը գտնվում է ընթացակարգային ձևավորման և բարեփոխումների ակտիվ փուլում, ինչով պայմանավորված՝ հաշվեքննության իրականացումը տվյալ պահին կարող է չապահովել լիարժեք, օբյեկտիվ և չափելի արդյունքներ:

Միաժամանակ, «Հաշվեքննության 2026–2028թթ. առաջնահերթությունները» նախագծային փաստաթուղթը արտաքին շրջանառության դնելիս ոլորտային նախարարություններից ստացվել են արձագանքներ, որոնց համաձայն՝ մի շարք ուղղություններով դեռևս չեն ավարտվել իրավական կարգավորումների վերանայման, գործիքների ներդրման կամ ինստիտուցիոնալ կարողությունների ձևավորման գործընթացները: Այդ հանգամանքը հիմք է հանդիսացել երկու թեմաների հաշվեքննությունն առավել նպատակահարմար ժամկետ տեղափոխելու համար:

<sup>6</sup> ՀՕ-240-Ն «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենք, 2024թ., Հոդված 4, մաս 1, կետ 28:

## Կատարողականի հաշվեքննությունները

2025 թվականի գործունեության ծրագրով մեկնարկել է երկու կատարողականի հաշվեքննություն:



### Հողերի կոնսոլիդացում

**Նպատակ՝** գնահատել ՀՀ-ում հողերի կոնսոլիդացման գործընթացի արդյունավետությունը և գնահատման արդյունքների հիման վրա ներկայացնել այդ գործընթացի բարելավմանն ուղղված առաջարկություններ:



### Բժշկական կադրային ներուժ

**Նպատակ՝** գնահատել առողջապահության բնագավառի մասնագիտական կադրային ներուժի տարածքային համաչափ զարգացմանն ուղղված պետական քաղաքականության միջոցառումները և ներկայացնել նշված միջոցառումների արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկություններ:

## Արդյունքները

Գյուղատնտեսական նշանակության չօգտագործվող հողերի շրջանառության մեջ դնելը և հողերի կոնսոլիդացման և Բժշկական կադրային ներուժի տարածքային անհամաչափ բաշխվածություն՝ մարզերում կադրային թերհագեցվածության կատարողականի հաշվեքննությունների արդյունքները կիրառարակվեն 2026 թվականին, և հաշվի առնելով, որ Հաշվեքննիչ պալատի մասին օրենքով<sup>7</sup> արգելվում է հաշվեքննության վերաբերյալ որևէ ձևով նախնական գնահատականներ և եզրակացություններ հրապարակել, հաշվեքննությունների արդյունքները չեն կարող ներկայացվել այս բաժնում:

<sup>7</sup> ՀՕ-240-Ն «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենք, 2024թ., Հոդված 23, մաս 7:

## Համապատասխանության հաշվեքննությունները

2025 թվականի գործունեության ծրագրով մեկնարկել է երկու համապատասխանության հաշվեքննություն, որոնք արդյունքները հրապարակվել են:



### Դեղերի արտադրության և դեղերի մեծածախ իրացման լիցենզավորման գործընթաց

**Նպատակ՝** գնահատել դեղերի արտադրության և դեղերի մեծածախ իրացման լիցենզավորման գործընթացի համապատասխանությունը սահմանված պահանջներին:

## Արդյունքները

### Եզրակացություն

Իրականացված համապատասխանության [հաշվեքննության արդյունքները](#) հիմք են տալիս եզրակացնելու, որ դեղերի արտադրության և մեծածախ իրացման շրջանառության ոլորտում հսկողական և հաշվետվողական համակարգերը բարելավման կարիք ունեն:

### Հիմնական անհամապատասխանություններ

Պալատն արձանագրել է 11 անհամապատասխանություններ՝

- Լիցենզիայի պայմանների թերություններ՝ ՊԱԳ/ՊԲԳ հավաստագրերի բացակայություն, որակավորված անձանց բացակայություն.
- Արտահանման, արտադրության և իրացման հաշվետվությունների հաշվառման մեխանիզմների բացակայություն.
- Դեղերի մեծածախ իրացման լիցենզիա ունեցող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի մասին պաշտոնական ինտերնետային կայքի բացակայություն.
- Լիցենզիայի և իրացման շրջանառության տվյալների անհամադրելիություն.
- Վտանգավոր թափոնների վնասագերծման պայմանագրերի բացակայություն:

### Ներկայացված առաջարկություններ

Պալատը ներկայացրել է 11 առաջարկություններ՝

- ուժեղացնելու հսկողությունը՝ ներդնելով ավտոմատացված հսկողության և թվայնացված համակարգեր,
- ներդնելու պարտադիր էլեկտրոնային հաշվետվությունների համակարգ, սահմանելու պատասխանատվություն և ապահովելու տվյալների մշտադիտարկում,
- ստեղծելու միասնական թվային հարթակ՝ ապահովելով միջգերատեսչական տվյալների փոխանակում,
- մեթոդական աջակցություն տրամադրելու և իրազեկելու շահառուներին,
- հարկային հսկողություն իրականացնելու:



## Պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումներ (2019–2023թթ.)

**Նպատակ՝** գնահատել պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների իրականացման համապատասխանությունը սահմանված ծրագրային նպատակներին:

### Արդյունքները



#### Եզրակացություն

Իրականացված համապատասխանության [հաշվեքննության արդյունքները](#) հիմք են տալիս եզրակացնելու, ՊՖԿՀ 2019-2023 թվականների բարեփոխումների ռազմավարությունը և գործողությունների ծրագիրն իրականացվել է ոչ ամբողջությամբ և շարունակվում է առ հաշվեքննության հրապարակման պահը: ԿՖՏԿՀ ներդրման բացակայության պայմաններում չի ապահովվում պետական հատվածի կազմակերպությունների ամբողջական ֆինանսական տեղեկատվության համախմբումը մեկ միասնական հարթակում:

#### Հիմնական փաստեր

ՀՀ կառավարության երկու որոշումներով երկարաձգվել են 36 միջոցառումների կատարման ժամկետները, իսկ առանձին միջոցառումներ շարադրվել են նոր խմբագրությամբ: ՊՖԿՀ բարեփոխումների 2019-2023 թվականների գործողությունների ծրագրով իրականացման ենթակա 90 միջոցառումներից չեն իրականացվել 37-ը՝

- Բյուջետային ծրագրերի ծախսակազմման գործընթացները չեն իրականացվում միասնական ավտոմատացված համակարգի միջոցով:
- Պետական մարմինները վարում են միայն իրենց տիրապետմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) պետական գույքի (կազմակերպության պահպանման ծախսերի) հաշվապահական հաշվառումը:
- Ներքին աուդիտի համակարգը ոչ բոլոր պետական մարմիններում է ներդրված:
- ԿՖԿՏՀ հիմնական բաղադրիչները ներդրված չեն:

ՀՀ ֆինանսների նախարարի 2025 թվականի հունվարի 23-ի թիվ 20-Լ հրամանով հաստատվել է 2025 թվականի ՊՖԿ ռազմավարական գործողությունների ծրագիրը, որում ներառվել են միայն Նախարարության կողմից կատարման ենթակա 31 գործողություն և 44 արդյունքային ցուցանիշ:

2025 թվականի ՊՖԿ ռազմավարական գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների/գործողությունների կատարման ընթացքին նախատեսվում է անդրադառնալ հեղիսկողության հաշվեքննությամբ:

# Համայնքներում հաշվեքննությունը



## Աշտարակի համայնքապետարանի 2024թ. Ֆինանսատնտեսական գործունեությունը

**Նպատակ՝** գնահատել ֆինանսական հաշվետվությունները՝ որպես մեկ ամբողջություն, և ներկայացնել կարծիք, ինչպես նաև ֆինանսատնտեսական գործունեության համապատասխանությունը գործող իրավական ակտերով և քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին ու պահանջներին:

## Արդյունքները



### Կարծիք

Իրականացված ֆինանսական հաշվեքննության արդյունքում ներկայացվել է [վերապահումով կարծիք](#):



### Եզրակացություն

Իրականացված համապատասխանության հաշվեքննության արդյունքները հիմք են տալիս եզրակացնելու, որ համայնքի ֆինանսատնտեսական գործունեության հսկողական և հաշվետվողական համակարգերը բարելավման կարիք ունեն:

### Էական խեղաթյուրումներ

- Ֆինանսական հաշվետվությունների 1,023,900 հազ. դրամ էական խեղաթյուրումներ, որոնք համատարած չեն:

### Հիմնական անհամապատասխանություններ՝

Պալատը ներկայացրել է 25 անհամապատասխանություններ՝

- բյուջետային և հաշվապահական կարգապահության թերություններ,
- եկամուտների թերիավաքագրման թերություններ,
- ՆՈՒՀ հաստիքների, հողերի կառավարման, աճուրդների հրապարակայնության և գնումների գործընթացի թերություններ,
- ծառայությունների և ակտիվների կառավարման թերություններ,
- ներքին հսկողության բացակայություն:

### Ներկայացված առաջարկություններ

Պալատը ներկայացրել է 13 առաջարկություններ՝

- ապահովել հաշվետվությունների ժամանակին և ամբողջական կազմումը,
- սահմանել ջրամատակարարման և ջրահեռացման վճարների դրույքաչափեր բոլոր բնակավայրերում ,
- համապատասխանեցնել ՆՈՒՀ հաստիքացուցակները իրավական ակտի պահանջներին,
- ստեղծել վարձակալությամբ հանձնված հողերի վարձավճարների, աղբահանության, ջրամատակարարման վճարների ավտոմատացված հաշվառման տվյալների բազաներ,
- ապահովել ներքին աուդիտի համակարգի առկայությունը:

## 5. Հետսկողությունը

Հետսկողությունը հաշվեքննության գործընթացի ավարտից հետո շարունակաբար իրականացվող գործընթաց է, որի միջոցով գնահատվում է հաշվեքննության արդյունքում ներկայացված առաջարկությունների իրականացումը և դրանց բարելավման ներուժը: Այն կարևոր գործիք է հաշվեքննության ազդեցության բարձրացման, հաշվետվողականության ուժեղացման և հանրային միջոցների արդյունավետ կառավարման ապահովման համար:

Հետսկողությամբ Հաշվեքննիչ պալատը պարբերաբար հաշվեքննության ենթարկված օբյեկտներից պահանջում և ստանում է տեղեկատվություն՝ առաջարկությունների և դրանց կատարման վերաբերյալ միջոցառումների ծրագրերի կատարման ընթացքի մասին, որը վերլուծվում է, ամփոփվում և ներկայացվում հանրությանը, Ազգային ժողովին և Կառավարությանը:

2025 թվականին Հաշվեքննիչ պալատի կողմից իրականացվել են հետսկողություններ կատարողականի հաշվեքննությունների շրջանակում, ինչի արդյունքում գնահատվել են 4 կատարողականի հաշվեքննությունների առաջարկությունների կատարման ընթացքը և կազմվել են հետսկողության հաշվետվություններ:



**Պրոբացիայի ծառայության գործունեության կատարողականի հաշվեքննություն**

**4**

**Առաջարկություններ**

*Ընդունվել են 100%-ով:*



**Օդի աղտոտվածության նվազեցման կատարողականի հաշվեքննություն**

**7**

**Առաջարկություններ**

*Ընդունվել են 100%-ով:*



**Պարտադիր կրթության համակարգից դուրս մնացած երեխաների ընդգրկվածության բարձրացման կատարողականի հաշվեքննություն**

**15**

**Առաջարկություններ**

*Ընդունվել են 93%-ով:*



**Առողջապահական կրիտիկական ֆիզիկական ենթակառուցվածքների՝ արտակարգ իրավիճակներին պատրաստվածության կատարողականի հաշվեքննություն**

**10**

**Առաջարկություններ**

*Ընդունվել են 100%-ով:*

# Առողջապահական կրիտիկական ֆիզիկական ենթակառուցվածքների արտակարգ իրավիճակներին պատրաստվածության կատարողականի հաշվեքննության հետհսկողություն<sup>8</sup>

## Առաջարկությունների կատարման ընթացքը

### Առողջապահական համակարգի ենթակառուցվածքային կարիքների, առկա կարողությունների և խզման համալիր գնահատման և մշտադիտարկման ուղղությամբ

#### Առաջընթաց

21 ԲՀ-ների համար իրականացվել է հիվանդանոցային անվտանգության ինդեքսի (HSI) գնահատում, իսկ Երևանի 7 ԲՀ-ների կողմից՝ նույն գործիքով ինքնագնահատում:

#### Բարելավման ներուժ

Գնահատման մեթոդաբանության մշակում (Հաստատման ընթացքում է գտնվում Ադետների ռիսկի գնահատման և ինդեքսավորման ուղեցույցը):

### Տվյալների բարելավման ու թվայնացման ուղղությամբ

#### Առաջընթաց

Մշակվել է անհրաժեշտ տվյալների հավաքման ձևաչափը և իրականացվել են քննարկումներ ԱՌՆԱՊ-ի, «Արմեդ» և «Լոկատոր» համակարգերի օպերատորների հետ:

#### Բարելավման ներուժ

Տվյալների օպերատիվ և ճշգրիտ կառավարմանը նպաստող դինամիկ բազայի, տեղեկատվական համակարգի ներդրում:

### Ենթակառուցվածքային դիմակայունության բարձրացման համալիր ծրագրի մշակման, ԲՀ-ների բնականոն գործունեությունը երաշխավորող՝ կենսական համակարգերի նվազագույն նորմատիվային և լիցենզավորման պահանջների ուղղությամբ

#### Առաջընթաց

Մշակվել և շրջանառվել են ԲՀ-ների շիննորմերի պահպանման ապահովման և լիցենզավորման պահանջների խստացման ուղղությամբ կարգավորումներ, որոնք ներառում են նաև ԲՀ-ների բնականոն գործունեությունը երաշխավորող՝ ԲՀ-ների շենքերի կենսական համակարգերի նվազագույն պահանջները:

Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության և սպասարկման գծով սահմանվել են կենսական համակարգերի պարտադիր [պահանջներ](#) (ԲԿ-ի, մասնավորապես առնվազն վիրահատարանի, մանկական և մեծահասակների վերակենդանացման, ինտենսիվ թերապիայի բաժանմունքների և լաբորատորիայի էլեկտրախնդիրայով մատակարարման, Կենտրոնական թթվածնամատակարարման համակարգի գծով):

#### Բարելավման ներուժ

ԲԿ-ների դիմակայունության բարձրացման համալիր ծրագրի մշակում:

### Առողջապահական համակարգի մակարդակում ԱԻ-ների *ռիսկի* կառավարման բացահայտ մանդատ նախատեսող և տեսչական մարմիններին իրավասություններ տրամադրող օրենսդրական փոփոխությունների ուղղությամբ

#### Առաջընթաց

«Ադետների ռիսկերի կառավարման և բնակչության պաշտպանության մասին» օրենքով նախատեսվել է, որ ԱԻ-ներով պայմանավորված՝ ԲՀ-ների կառավարման լիզորություններն անցնում են ԱՆ-ին:

#### Բարելավման ներուժ

ԱՆ-ում ԱԻ-ների ռիսկերի կառավարման ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում:

Տեսչական մարմինների մանդատի ընդլայնում:

<sup>8</sup> Առողջապահության նախարարի 2024 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 6656-Ա հրամանով հաստատվել է հաշվեքննության առաջարկությունները հասցեագրող միջոցառումների ծրագիրը: Հաշվեքննության արդյունքների ու առաջարկությունների մանրամասներին հնարավոր է ծանոթանալ հրապարակված ընթացիկ եզրակացությունում ([ԿՀ-0001-24-01](#)):

# Պարտադիր կրթության համակարգից դուրս մնացած երեխաների ընդգրկվածության բարձրացման կատարողականի հաշվեքննության հետհսկողություն<sup>9</sup>

## Առաջարկությունների կատարման ընթացքը

**Աշխատանքների կոորդինացման, փաստաթղթեր չունեցող երեխաների ընդունելության պարզեցման, առաջին դասարան ընդգրկվելուն և պարտադիր կրթության շարունակականության ապահովման ուղղությամբ**

### Առաջընթաց

Բարելավվել են ինստիտուցիոնալ մեխանիզմները, որոնք թույլ կտան ավելի արդյունավետ կառավարել ժամանակին առաջին դասարան չընդունված երեխաների և հիմնական կրթությունից (9-րդ դասարանից) հետո պարտադիր կրթության հաջորդ մակարդակին չանցնելու, ինչպես նաև տեղեկատվական շտեմարանների տեսանկյունից «անտեսանելի» երեխաների դեպքերը և առանց փաստաթղթերի երեխաներին պարտադիր կրթության մեջ ընդգրկելու ռիսկերը:

### Բարելավման ներուժ

Կոորդինացման մեխանիզմի սահմանում:

**Ռիսկի տակ գտնվող սովորողի սահմանման վերանայման, ռիսկերի մշտադիտարկման և ԿԿՏՀ տվյալների հիման վրա հասցեական քաղաքականության միջոցառումների մշակման ուղղությամբ**

### Առաջընթաց

Բարելավվել են ինստիտուցիոնալ մեխանիզմները, որոնք թույլ կտան ապահովել ավելի արդյունավետ վաղ ահազանգում՝ կանխարգելելով այն դեպքերը, երբ երեխան դուրս կմնար պարտադիր կրթությունից՝ առանց նախապես ռիսկայնության գոտում հայտնվելու:

### Բարելավման ներուժ

Պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկի համապարփակ մշտադիտարկում: Հաճախումների լիարժեք հաշվառմանը միտված կարգավորումների բարելավում: Պարտադիր կրթությունից դուրս մնալու պատճառները հասցեագրող միջոցառումների ծրագրի մշակում:

**ԿԿՏՀ և ՍԷԿՏ տվյալների շտեմարանների փոխգործելիության ապահովման և արտերկրում գտնվող ՀՀ քաղաքացիների կրթության իրավունքի իրացման ուղղությամբ**

### Առաջընթաց

Բարելավվել են ինստիտուցիոնալ մեխանիզմները, որոնք թույլ կտան՝

- անհատական դեպքերի ընդհանրացմամբ, համակարգային մակարդակում վեր հանել պարտադիր կրթությունից դուրս մնալու պատճառները՝ ստեղծելով դրանց համարժեք միջոցառումների մշակման հնարավորություն.
- կրթության կառավարման (ԿԿՏՀ) և սահմանահատումների (ՍԷԿՏ) տեղեկատվական համակարգերի փոխգործելիության ճանապարհով ունենալ ավելի որակյալ տվյալներ՝ դեպքերը կառավարելու համար:

### Բարելավման ներուժ

Սահմանահատումների վերաբերյալ ժամանակին տվյալներ: Արտերկրում գտնվող պարտադիր կրթության տարիքի ՀՀ քաղաքացիների կրթության իրավունքի իրացվածություն:

**Մարմինների քայլերի հաջորդականության հստակեցման, վիճակագրական հաշվետվությունների ձևերում ՊԿԴՄԵ-ների ու ռիսկի գոտում գտնվող անձանց վերաբերյալ տվյալների ներառման ուղղությամբ**

### Առաջընթաց

Շահագրգիռ և պատասխանատու մարմինների կազմում ներառվել է նաև Առողջապահության նախարարությունը և ՏԿԵՆ-ը:

### Բարելավման ներուժ

Վիճակագրության բարելավում և հրապարակում:

<sup>9</sup> ԿԳՄՍ նախարարի 2025 թվականի ապրիլի 10-ի թիվ 01/09.3/10862-2025 գրությամբ ներկայացվել է հաշվեքննության առաջարկությունները հասցեագրող միջոցառումների ծրագիրը: Հաշվեքննության արդյունքների ու առաջարկությունների մանրամասներին հնարավոր է ծանոթանալ հրապարակված ընթացիկ եզրակացությունում ([ԿՀ-0002-25-01](#)) և հետհսկողության հաշվետվությունում ([ԿՀՀ-0001-25-01](#)):

# Պրոբացիայի ծառայության գործունեության կատարողականի հաշվեքննության հետհսկողություն<sup>10</sup>

## Առաջարկությունների կատարման ընթացքը

**Ռիսկերի և կարիքների գնահատման արդիականացված մեթոդաբանության ու վերասոցիալականացման ծրագրերի արդյունավետության գնահատման գործիքակազմի ներդրման ուղղությամբ**

### Առաջընթաց

Ներդրվել է քրեածին կարիքների գնահատման նոր էլեկտրոնային գործիք: Թվով 4 վերականգնողական ծրագրեր ապահովվել են արդյունավետության գնահատման մեթոդաբանությամբ:

### Բարելավման ներուժ

Կրկնահանցագործության ռիսկի գնահատման գործիքի ստեղծում և անչափահասների քրեածին կարիքների գնահատման վերանայում: Ներդրվող բոլոր նոր վերականգնողական ծրագրերում արդյունավետության գնահատման հստակ չափորոշիչների սահմանում:

**Թվայնացման և տվյալների ուղղությամբ**

### Առաջընթաց

Կնքվել է e-probation համակարգի սպասարկման նոր պայմանագիր, աշխատանքներ են տարվում համակարգի գործառույթների ավելի խորը թվայնացման և օպտիմալացման ուղղությամբ:

### Բարելավման ներուժ

Նախատեսվում է թվայնացնել շահառուների՝ թղթային կրիչներով արխիվացված բոլոր գործերը և ներբեռնել համակարգ, ընդլայնել հսկողական, ինքնաշխատ հաշվետվությունների կազմման և վիճակագրական տվյալների ստացման գործիքակազմը, համակարգն ինտեգրել վճարային տերմինալների և բանկային հավելվածների հետ՝ շահառուների կողմից պետբյուջեի հանդեպ պարտավորությունների կատարման մատչելիության ապահովման համար, ներդնել շահառուների՝ այցերի հավաստման ինքնաշխատ գործիքակազմ, այլ համակարգերի հետ փոխգործելիության ու թվայնացման մի շարք այլ միջոցառումներ:

**Շահագրգիռ և պատասխանատու մարմինների փոխգործակցության խզորացման ուղղությամբ**

### Առաջընթաց

ԵԽ և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ 4 վերականգնողական ծրագրերի ներդրում:

### Բարելավման ներուժ

Նոր ծրագրերի ներդրում՝ ուղղված խաղամոլության հաղթահարմանը, ճանապարհատրանսպորտային պատահարներով հաշվառված շահառուներին և թիրախային այլ խմբերի:

Պրոբացիայի շահառուների համալիր կարիքները համարժեքորեն հասցեագրող միջոցառումների ծրագրի մշակում:

<sup>10</sup> Արդարադատության նախարարի 2025 թվականի ապրիլի 7-ի թիվ 190-Լ հրամանով հաստատվել է հաշվեքննության առաջարկությունները հասցեագրող միջոցառումների ծրագիրը: Հաշվեքննության արդյունքների ու առաջարկությունների մանրամասներին հնարավոր է ծանոթանալ հրապարակված ընթացիկ եզրակացությունում ([ԿՀ-0003-25-02](#)):

# Օդի աղտոտվածության նվազեցման կատարողականի հաշվեքննության հետհսկողություն<sup>1</sup>

## Առաջարկությունների կատարման ընթացքը

**Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի՝ ՀՀ-ում գործող ստանդարտների և մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի համապարփակ գույքագրման ուղղությամբ**

**Առաջընթաց**

Օդի որակի ՀՀ ստանդարտները ներդաշնակեցվել են միջազգային [ստանդարտներին](#) և քայլեր են ձեռնարկվել մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների համապարփակ տվյալներ ունենալու ուղղությամբ (գույքագրման [նախագիծ](#) մշակում):

**Բարելավման ներուժ**

Օդի որակի նոր ստանդարտների աստիճանական կիրառություն, մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների համապարփակ գույքագրման արդյունքների ստացում:

**Մթնոլորտային օդի մոնիթորինգի դիտացանցի արդիականացման ուղղությամբ**

**Առաջընթաց**

Մշակվել է մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտացանցի արդիականացման [ծրագիր](#) և մեկնարկել է դրա իրականացումը (ձեռք են բերվել ժամանակակից երկու դիտակայաններ):

**Բարելավման ներուժ**

Օդի որակի մշտադիտարկման համակարգի արդիականացման ծրագրի կատարում և արդյունքում՝ վնասակար նյութերի կոնցենտրացիաների վերաբերյալ որակյալ տվյալների ստացում:

**Միջոցառումների կոորդինացման մեխանիզմների և օդի որակի բարելավման մարզային և համայնքային պլանների ուղղությամբ**

**Առաջընթաց**

Ստեղծվել է տվյալ բնագավառում հանրային կառավարման մարմինների գործողությունների կոորդինացման մեխանիզմ ([միջգերատեսչական աշխատանքային խումբ](#)): Քայլեր են ձեռնարկվել օդի որակի պահպանության համայնքային [պլանների իրավական հիմքերի](#) ձևավորման ուղղությամբ:

**Բարելավման ներուժ**

Համապետական, մարզային և համայնքային մակարդակներում օդի որակի ներդաշնակեցված կառավարման համակարգի գործունեություն:

**Օդի որակի բարելավման ազգային ռազմավարության և դրանից բխող համալիր միջոցառումների ծրագրի մշակման ուղղությամբ**

**Առաջընթաց**

Օդի որակի բարելավման ռազմավարության մշակում:

**Բարելավման ներուժ**

Օդի աղտոտվածությամբ պայմանավորված վաղաժամ մահերի և ոլորտային արտանետումների նվազեցման թիրախային ցուցանիշների սահմանում:

<sup>1</sup> Շրջակա միջավայրի նախարարի 2025 թվականի հունիսի 11-ի թիվ 226-Լ հրամանով հաստատվել է հաշվեքննության առաջարկությունները հասցեագրող միջոցառումների ծրագիրը: Հաշվեքննության արդյունքների ու առաջարկությունների մանրամասներին հնարավոր է ծանոթանալ հրապարակված ընթացիկ եզրակացությունում ([ԿՀ-0004-25-03](#)) և հետհսկողության հաշվետվությունում ([ԿՀՀ-0002-25-01](#)):

# ԲԱԺԻՆ 3. ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՓՈՐՁԻ ԿՈՒՏԱԿՈՒՄ

## Արտաքին մարտահրավերներ

## Ներքին մարտահրավերներ

### Տեղեկատվության հասանելիության սահմանափակում

Հաշվեքննության հաշվետվությունների և ընթացիկ եզրակացությունների նախագծերի վերաբերյալ հաշվեքննության օբյեկտների մեկնաբանությունները մի շարք դեպքերում չեն ներկայացվել օրենսդրությամբ սահմանված տասն օրյա ժամկետում, ինչը հանգեցրել է հաշվեքննությունների ավարտի ժամկետների հետաձգման:

### Տաղանդների ներգրավում

Մասնագիտացված պաշտոններում, այդ թվում՝ ՏՏ աուդիտում, անձնակազմի թերհամալրվածություն, որը պայմանավորված է նոր օրենքին համապատասխան պաշտոնին ներկայացված պահանջներով նոր մասնագետների ներգրավման սահմանափակումներով:

### Ինստիտուցիոնալ դիմակայունություն

Պալատի գործունեությունը երկու տարբեր մասնաշենքերում հանգեցնում է պետական բյուջեից ծախսերի շարունակական աճի և միաժամանակ սահմանափակում է կառույցի աշխատանքների արդյունավետ կազմակերպման հնարավորությունները:

### Կարողությունների սահմանափակում

Հաշվեքննության թեմաների պահանջարկի աճը գերազանցում է անձնակազմի ներուժի աճին, ինչը հանգեցնում է առաջնահերթություններից հիման վրա հաշվեքննության թեմաների ընտրության սահմանափակումների:

### Փոփոխվող ռիսկային միջավայր

Հանրային ծառայությունների արագ թվայնացումը հանգեցրել է ռիսկերի նոր կատեգորիաների ձևավորմանը, որոնք պահանջում են մասնագիտացված հաշվեքննության ՏՏ կարողություններ, որոնք այս փուլում դեռևս լիարժեք ձևավորված չեն:

### Ժառանգված մտածողություն

Վերահսկողության ժառանգված համակարգից հաշվեքննության համակարգերի անցման գործընթացը հանգեցնում է գործընթացների կառավարման խոչընդոտների:

# ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

Հաշվեքննիչ պալատն իր երախտագիտությունն է հայտնում բոլոր այն անհատներին և հաստատություններին, որոնց հետ համագործակցությունը հնարավոր դարձրեց 2025 թվականի գործունեությունը: Այս զեկույցում ներկայացված եզրակացություններն ու առաջարկությունները համատեղ ջանքերի և հանրային հաշվետվողականության բարձրագույն չափանիշներին ինստիտուցիոնալ հանձնառության արդյունք են:

## Պալատի անձնակազմին

Հաշվեքննիչ պալատի ծառայողներին՝ իրականացված յուրաքանչյուր հաշվեքննության հիմք հանդիսացող փորձառության, աշխատասիրության և ազնվության, ցուցաբերած մասնագիտական վարքագծի և հանրային ծառայությանը նվիրվածության համար:

## Գործընկեր մարմիններին

Ազգային ժողովին, Կառավարությանը, Գլխավոր դատախազությանը, քաղաքացիական հասարակության կազմակերպություններին և մամուլին՝ թափանցիկ և արդյունավետ կառավարման ընդհանուր նպատակին հասնելու գործում ցուցաբերած համագործակցության համար:

## Հաշվեքննության օբյեկտներին

Հանրային ինչափսնության այն մարմիններին, որտեղ իրականացվել է հաշվեքննություն՝ հաշվեքննության գործընթացում համագործակցության և հաշվեքննության հաշվետվություններով ներկայացված առաջարկությունների արդյունքում իրենց գործունեությունը բարելավելուն ուղղված կառուցողական աշխատանքի համար:

## Միջազգային գործընկերներին

Բարձրագույն հաշվեքննիչ մարմինների միազգային կազմակերպություններին՝ INTOSAI, EUROSAI և ASOSAI, և Շվեդիայի աուդիտի գրասենյակին ու այլ գործընկեր ԲՀՄ-ներին՝ գիտելիքների փոխանակման և Հաշվեքննիչ պալատի ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդման համար:

## Հավելված Ա. Հաշվետվություններ, որոնք հրապարակվել են 2025 թվականին

Որոշման N	Թեմա	Հրապարակման ամսաթիվ
1-Ա-2026	Աշտարակի համայնքապետարանի 2024 թվականի ֆինանսատնտեսական գործունեության ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն	25 դեկտեմբեր, 2025
86-Ա-2025	Օդի աղտոտվածության նվազեցման կատարողականի հաշվեքննության հետհսկողություն	25 դեկտեմբեր, 2025
79-Ա-2025	Պարտադիր կրթության համակարգից դուրս մնացած երեխաների ընդգրկվածության բարձրացման կատարողականի հաշվեքննության հետհսկողություն	8 դեկտեմբեր, 2025
77-Ա-2025	ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման ֆինանսական հաշվեքննություն	11 նոյեմբեր, 2025
58-Ա-2025	ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի առաջին եռամսյակի կատարման ֆինանսական հաշվեքննություն	28 օգոստոս, 2025
37-Լ-2025	2024 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդում	13 հունիս, 2025
36-Լ-2025	ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացություն	30 մայիս, 2025
27-Ա-2025	Օդի աղտոտվածության նվազեցման կատարողականի հաշվեքննություն	20 մայիս, 2025
23-Ա-2025	ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի 2023 թվականի ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն	21 մարտ, 2025
16-Ա-2025	Պրորազիայի ծառայության գործունեության կատարողականի հաշվեքննություն	6 մարտ, 2025
12-Ա-2025	Պարտադիր կրթության համակարգից դուրս մնացած երեխաների ընդգրկվածության բարձրացման կատարողականի հաշվեքննություն	6 մարտ, 2025

**Լշում.** Այս աղյուսակը ներկայացնում է ներկայացուցչական ընտրանք: 24 հաշվեքննության և հետհսկողության հաշվետվությունների ամբողջական ցանկը հասանելի է Պալատի պաշտոնական **armsai.am** կայքում: